ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ԽԻԿԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

XIX դ. 50—60-ական թվականները փոթորկալից էին ոչ միայն Ռուսաստանի, այլև հայ ժողովրդի մտավոր կյանքում։ 1828 թ. պատմական իրադարձություններից հետո Արևելյան Հայաստանն ընթանում էր զարգացման նոր ուղիով։ Հայ ժողովուրդը իր բախտը մեկընդմիշտ լծորդելով ռուս ժողովրդի առաջընթացին, կրում է նրա առաջավոր գաղափարները։ Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրությունը, 1861 թ. գյուղացիական ռեֆորմը, որ Վ. Ի. Լենինի բնութագրմամբ «...գյուղացիների ամենաանխիղճ կողոպուտն էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղրանք նրանց նկատմամբ»[1], կիրառվեց բովանդակ երկրում։ Հետռեֆորմյան գյուղացիական ալեկոծումները նշանավորեցին հասարակական զարգացման նոր փուլը։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ ազնվական-ազատագրական շարժումներին փոխարինում էին ռազնոչինական (բուրժուա-դեմոկրատական) շարժումները։ Երկրի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքում ազնվական-հեղափոխական մտավորականությանը հերթափոխելու եկավ ռազնոչինականը (տարաստիճան), որը ջանում էր ավելի մոտիկից կապվել ժողովրդի հետ և արտահայտել նրա բաղձանքները։ «Գերցենը արտասահմանում ստեղծեց ռուսական ազատ մամուլ,— գրել է Վ. Ի. Լենինը,— սա է նրա մեծ ծառայությունը։ «Պոլյարնայա զվեզդա»-ն բարձրացրեց դեկաբրիստների տրադիցիան, «Կոլոկոլ»-ը (1857—1867) սարի պես կանգնեց գյուղացիների ազատագրման համար։ Ստրկական լռությունը խախտվեց»[2]։

Արևելահայ նախամարքսյան հասարակական-քաղաքական միտքը հակամարտերում ճյուղավորվում է։ XIX դ. 50—60-ական թվականներին որոշակիորեն ձևավորվում են հայ հասարակական-քաղաքական հոսանքները՝ արևելահայ կղերա-աղայական, ազգային-պահպանողական, ազգային-լիբերալ և հեղափոխական-դեմոկրատական, որոնք արտահայտում էին դասակարգերի և հասարակական տարբեր խավերի շահերը։ Գաղափարական ներհակ հոսանքների և դասակարգային պայքարի բովում XIX դ. 60-ական թվականների սկզբին ձևավորվում է արևելահայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որի կազմակերպիչն ու առաջնորդն էր Մ. Նալբանդյանը։

Մ. Նալբանդյանի փիլիսոփայական, սոցիոլոգիական, գրական ժառանգությունը հայ հասարակական-քաղաքական մտքի նախամարքսյան շրջանի բարձրակետն է։ Շարունակելով Խ. Աբովյանի լուսավորական, ազգային-դեմոկրատական քննադատության ուղեգիծը, նա իրեն ազատակամ նվիրեց ժողովրդի ազատագրության վսեմ գործին, խորացրեց և հեղափոխական ընթացքի մեջ դրեց այն, իր որոնումների «փշոտ ճանապարհին», հաղթահարելով գաղափարական խոչընդոտները, «արյուն ու կրակ» թափելով թշ-

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 20, էջ 211։
2 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 21, էջ 319։

նամու վրա, ձեռք մեկնեց ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատներին, իրողություն, որ նշանավորում էր հայ առաջավոր հասարակական մտքի մերձեցումը ժամանակի ռուսական հեղափոխական շարժմանը։ Մ. Նալբանդյանը հեղափոխական մեծ դեմոկրատ է, ականավոր գրող ու անզուգական հրապարակագիր, ներհուն փիլիսոփա ու տնտեսագետ, նրբամիտ գրական քննադատ ու տեսաբան։ Նրա հեղափոխական-դեմոկրատական գաղափարների շնորհիվ «Հյուսիսափայլը» դարձավ հայ առաջավոր հասարակական մտքի պրոպագանդայի ամբիոն, մեծապես խթանեց հայ դեմոկրատական հոսանքի զարգացումը։ Մ. Նալբանդյանը հանճարեղ մտածող էր, իսկ ինչպես Անատոլ Ֆրանսն է ասել՝ հանճարը «անցյալի խիղճն է, ապագայի ուղեղը»։

Մ. Նալբանդյանը, ինչպես ճիշտ կերպով նկատել է ակադ. Ա. Հովհաննիսյանը, ժողովրդի մեջ տեսավ ազգի հենարանն ու վերակենդանության լծակը, գյուղի ու քաղաքի մանր արտադրողների հետ կապված առաջավոր հրատասարդության մեջ նշմարեց նրա զարթոնքը կրոջներին, հայ դեմոկրատիայի ազգային-ազատագրական հեռանկարները կողմնորոշեց դեպի արևելքի և արևմուտքի, և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի գլխավորած հեղափոխական շարժումները։ «Ռուսիո ազատությունը,— գրել է Մ. Նալբանդյանը,— ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»[3]։

Սովետական գիտնականներն ու գրողները, հասարակագետներն ու հրապարակագիրները, հենվելով հայ անդրանիկ մարքսիստների՝ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Մյասնիկյանի և այլոց աշխատությունների, նրանց հիմնարար տեսակետների ու բնութագրումների վրա, զարգացման նոր աստիճանի են հասցրել նալբանդյանագիտությունը՝ հայագիտության անկապտելի մասը։ Ուշագրավ է այն փաստը, որ սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը, որը խմբագրում էին բոլշևիկներ Ս. Խանոյանը, Ա. Մռավյանը, 1916 թ. մարտի 27-ի համարը նվիրել է Մ. Նալբանդյանի հիշատակին։ Տպագրվել է նրա նկարը, հոդվածներ, այդ թվում «Ազատության դրված զինվորը» խորագրով առաջնորդողը (ավելի քան 16 տող գրաքննիչի կողմից հանված է)։ «Պայքարը», մեծարելով Մ. Նալբանդյանին, նշել է, որ նա հայ ազատագրական շարժման ռահվիրան է. «Նրա սիրտը ամբողջովին լցված էր իր ժողովրդի և ամբողջ մարդկության ցավերով»։ Հոդվածի հեղինակը Հ. Սուրխաթյանն է։

Նալբանդյանագիտությունը հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի ծնունդ է։ Սովետական նալբանդյանագիտության սոսկ մատենագիտական ցանկերը, որոնք սպասում են իրենց կազմողին, մի ստվարածավալ հատոր կկազմեն։ Նալբանդյանագիտության գլխավոր բովանդակությունը, նախ և առաջ Մ. Նալբանդյանի գրական, գիտա-տեսական ժառանգության հրատարակությունն է։ Նախահեղափոխական շրջանի հրատարակությունների մեջ աչքի է ընկնում Դոնի Ռոստովում 1902—1906 թթ. լույս տեսած երկերի երկհատորյակը, որտեղ ղետեղված են նրա բանաստեղծություններն ու արձակ գրվածքները։ Մ. Նալբանդյանի ստեղծագործությունները լայնորեն հրատարակվել են սովետական շրջանում։

Նոր Նախիջևանի հայ զանգվածը, եռանդուն հայաղետ Ե. Շահազիզը, պատշաճը հատուցելով իրենց մեծ հայրենակցին, Սովետական Հայաստանի

---

3 Ն. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1940, էջ 61։

գրականության արխիվին նվիրաբերեցին Մ. Նալբանդյանի գրական ժառանգության դիվանը, որը և աղբյուրագիտական ամուր հիմք դարձավ նրա երկերի ամբողջական հրատարակությունների համար։ Ե. Շահազիզն էլ դարձավ Մ. Նալբանդյանի առաջին կենսագիրներից մեկը և նրա մի շարք անտիպ աշխատությունների հրատարակողը։ Հիշենք նրա «Մ. Նալբանդյանի բանտից գրած նամակները», «Մ. Նալբանդյանի նամակներից», «Նամականիք կոմս Էմանուելի» և այլ հրապարակումները[4]։ 1917—1979 թթ. Մ. Նալբանդյանի երկերը ՍՍՀՄ-ում տպագրվել են 30 անգամ, ավելի քան 150 հազար օրինակ տպաքանակով։ Շատ ստեղծագործություններ հարյուր հազարավոր օրինակ տպաքանակով հրապարակվել են պարբերական մամուլում։ Առանձին գրքերով լույս են տեսել նրա «Բանաստեղծություններ» (Երևան, 1941, 1951, 1954) ժողովածուները, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» (Երևան, 1930, 1954), «Երկու տող», «Ազգային թշվառություն» (Երևան, 1939), «Երկու տող» (Երևան, 1954), «Կրիտիկա Սոս և Վարդիթերի» (Երևան, 1954) և այլ աշխատություններ։ ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը 1940—1949 թթ. իրականացրել է Մ. Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» քառահատոր, ակադեմիական հրատարակությունը՝ Հ. Մելիքյանի, Խ. Սարգսյանի, Հ. Մկրտչյանի խմբագրությամբ և Ն. Մուրադյանի, Ե. Հովհաննիսյանի և Ա. Ինճիկյանի կոմենտարներով ու ծանոթագրություններով։ Դա մեծ հեղափոխական-դեմոկրատի գրական ժառանգության ամբողջական հրատարակության առաջին լուրջ փորձն էր։ Այն հրատարակությունը պատրաստող գիտնականները հաղթահարել են բազմաթիվ դժվարություններ, ժողովածուն հարստացրել հեղինակի նորահայտ երկերի և նամակների հրապարակումով։ Քառահատորյակի երկերը դասավորված են հետևյալ կարգով. առաջին հատորը ամփոփում է գեղարվեստական ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, պոեմներ, արձակ գործեր. երկրորդը՝ գրական-հրապարակախոսական, քննադատական հոդվածներ, գրախոսություններ, ուսումնասիրություններ («Հյուսիսափայլի» շրջան), երրորդը՝ հրապարակախոսական, գրական-տեսական բնույթի աշխատություններ (60-ական թվականներ), չորրորդը՝ նամակներ, գրագրություններ, գրառումներ, անավարտ աշխատություններ, երկերի ժողովածուի հրատարակության ընթացքում նոր հայտնաբերված գործեր։ Տեքստաբաններն ու խմբագիրները ջանացել են հարազատ մնալ բնագրերին, քանզի Մ. Նալբանդյանը ոչ միայն աշխարհաբար լեզվի աննկուն պրոպագանդիստ էր, այլև նրա գիտական խորամիտ մշակողը։ Հեղինակի լեզուն անաղարտ ներկայացնելը հնարավորություն է ընձեռում ամբողջական գաղափար կազմելու Մ. Նալբանդյանի լեզվագիտական հայացքների մասին։ Քառահատորյակի հրատարակիչներին, ինչ խոսք, մտահոգել է նաև Մ. Նալբանդյանի կորած կամ տակավին չհայտնաբերած նյութերի բախտը, որոնց ցանկը տրվել է նրանց կողմից, դրանով իսկ դյուրին դարձնելով հետագա որոնումները։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ այնուհետև լույս է տեսել Մ. Նալբանդյանի «Երկերի ժողովածուն»՝ Ա. Հովհաննիսյանի, Ա. Ինճիկյանի, Ս. Դարոնյանի, Ս. Արեշյանի և Խ. Սարգսյանի խմբագրությամբ։

---

4 «Նորք», 1923, գիրք 3, էջ 135—150, «Պրոլետար», 1937, № 148, «Խորհրդային գրականություն», 1935, № 2, էջ 149—153։

1941 թ. Հայպետհրատը ռուսերեն լեզվով լույս է ընծայել նրա «Ընտիր երկերը», 1954 թ. Մոսկվայում հրատարակվել է փիլիսոփայական, հասարակական-քաղաքական «Ընտիր երկերը» (ներածական հոդվածը և ընդհանուր խմբագրությունը՝ Ա. Բ. Խաչատրյանի)։ 1956 թ. լույս տեսավ «Միքայել Նալբանդյան. վավերագրերի ժողովածու», միահատորյակը, որի տեքստը պատրաստեցին և խմբագրեցին Ա. Ինճիկյանը և Գ. Հարությունյանը։ 1971 թ. Նալբանդյանագիտությունը հարստացավ մի նորահայտ երկով. լույս տեսավ նրա «Մինին՝ խոսք, մյուսին՝ հարսն» վիպակը, որի լուսատիպ օրինակը ձեռք բերելու գործում երախտիք ունի ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Հասրաթյանը։ 1966 թ. վերադառնալով արտասահմանյան գիտական գործուղումից, նա իր հետ բերեց հրատարակիչ Վ. Սեթյանի կողմից Բեյրութում հայտնաբերված հիշյալ վիպակի լուսատիպ օրինակը։ Հետագայում ձեռք բերվեցին ևս երկու լուսատիպ օրինակ, ինչպես և վիպակի առաջին հրատարակության բնօրինակը, որոնք և հիմք հանդիսացան վիպակի սովետական շրջանի հրատարակության համար։ Ինչպես այդ, այնպես էլ Մ. Նալբանդյանի մի շարք այլ աշխատություններ ունեցել են իրենց ոդիսականը։

Մ. Նալբանդյանի երկերը մեծ տպաքանակով հրատարակվում են նրա ծննդյան 150-ամյակի առթիվ։

Մ. Նալբանդյանի կյանքի անընդմեջ շղթայի լուսաբանությունը սովետական նալբանդյանագիտության առաջնահերթ խնդիրն է։ Հրապարակի վրա են Մ. Նալբանդյանին նվիրված տասնյակ արժեքավոր աշխատություններ, մենագրություններ, գրքեր, նրա կյանքի ու գործունեության տարեգրություններ։ Նալբանդյանագիտության զարգացման գործում աչքի ընկնող ծառայություններ ունեն շատ և շատ գիտնականներ ու գրողներ։

Մ. Նալբանդյանը սովետական շրջանում տեղայնական շրջանակներից, ազգային գործիչների բույլից բարձրացվեց և դասվեց Ռուսաստանի հեղափոխական շարժման ռահվիրաների համաստեղության շարքերը։ Մեր կարծիքով նախ և առաջ սա է սովետական նալբանդյանագիտության մեծ նվաճումը և նրա ծառայությունը պատմության առջև։

Նալբանդյանագիտության երախտավորներից է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադ. Ա. Հովհաննիսյանը։ Տակավին 1935 թ. նրա խմբագրությամբ և մեկնաբանություններով Մոսկվայում լույս տեսավ Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր» ստվարածավալ ժողովածուն։ «Անտիպ երկերի» կոմենտարները դարձան հեղինակի «Նալբանդյանը և նրա ժամանակը» (Երևան, 1955—1956) երկհատոր մենագրության ատաղձը։ Սովետական նալբանդյանագիտության, այդ թվում Ա. Հովհաննիսյանի՝ Մ. Նալբանդյանին նվիրված աշխատությունների համար ելակետային նշանակություն ունեցավ Ալ. Մյասնիկյանի «Միքայել Նալբանդյան» մենագրությունը։ Այն ամենը, ինչ Ալ. Մյասնիկյանը խտացած մտքերով և թեզերի ձևով է շարադրել, հանձին Ա. Հովհաննիսյանի և այլոց գտավ իր լավագույն մեկնաբաններին ու հարստացնողներին։ «Նալբանդյանը դա մի խոշոր լույս է հայ իրականության երկնակամարի վրա,— գրել է Ալ. Մյասնիկյանը,—սկսած անցյալ դարու կեսից մինչև XX հարյուրամյակը... Նա հեղափոխական էր իր մտքով ու գործերով, որպես հեղափոխական էլ նա մեռավ... Նա տասնյակ տարիների, երկար ժամանակների միջով ու հարյուրավոր, հազարավոր մեշչանական գլուխների վրայով մեզ է նայում և միա-

նում է արդի մարտնչող բանվորությանը, նրան սատարող աղքատ գյուղացիությանը»[5]։

Գիտական ինչպիսի հայտնագործություն։

Ա. Հովհաննիսյանի աշխատություններում փաստական հարուստ նյութերով լիովին բացվում է Ալ. Մյասնիկյանի դրույթը, ամբողջ ուժով ցույց է տրվում Մ. Նալբանդյանի տեղը հայ ժողովրդի, նրա դրականության, մտավոր մշակույթի պատմության մեջ։ Նրանցում ամբողջ վեհությամբ վեր է խոյանում հեղափոխական մեծ դեմոկրատը, գյուղացիական սոցիալիզմի ջատագովը, ռուս մեծ հեղափոխական դեմոկրատներ Ա. Գերցենի և Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի և Ն. Օգարևի գաղափարական զինակիցը՝ անզուգական Մ. Նալբանդյանը։

Ա. Հովհաննիսյանը գիտական հաստատակամությամբ և հետևողականությամբ տակավ առ տակավ հարստացրել է սովետական նալբանդյանագիտությունը։ Հաջորդաբար լույս են տեսել Մ. Նալբանդյանին նվիրված նրա մենագրություններն ու գրքերը, հոդվածները, դիտական հաղորդումները. այդ թվում՝ «Միքայել Նալբանդյանի նորահայտ պամֆլետը» (Երևան, 1950), «Միքայել Նալբանդյանի կենսագրության անհայտ էջերը» (Երևան, 1954), «Նալբանդյանի շրջադարձը իդեալիզմից դեպի մատերիալիզմ» (Երևան, 1954), «Նալբանդյանը և նրա ժամանակը» (գիրք առաջին, 1955, գիրք երկրորդ՝ 1956), «XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները»[6], «Միքայել Նալբանդյանը և ռուս հեղափոխական դեմոկրատների գաղափարական ընդհանրություններն ու քաղաքական կապերը»[7] և այլն։

Ա. Հովհաննիսյանի նալբանդյանագիտական ժառանգության պսակն է կազմում «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրությունը, որտեղ հեղինակը պատվանդան ունենալով մարքսիզմ-լենինիզմը, բացում է անցյալ դարի 60-ական թվականների հայ հասարակական-քաղաքական մտքի բարդ ու խճճված ծալքերը, մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի բոցավառ կյանքը և գործունեությունը։ Հիշենք Վ. Ի. Լենինի մարգարեական խոսքերը ռուս հեղափոխական-դեմոկրատների մասին. «Իրականում հենց նրանք էին այդ դարաշրջանի մեծ գործիչները,— գրել է Վ. Ի. Լենինը,— և որքան մենք ավելի ենք հեռանում նրանցից, այնքան ավելի է պարզվում մեզ համար նրանց մեծությունը, այնքան ավելի է ակնհայտ դառնում այն ժամանակվա լիբերալ ռեֆորմիստների չնչինությունը, ողորմելիությունը»[8]։

Ռուս հեղափոխական դեմոկրատներին տրված լենինյան գնահատականի լույսով է ողողված «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրությունը, որն իր տեսակի աշխատությունների մեջ առանձնանում է ոչ միայն իր ծավալով, այլև բազմապլանայնությամբ։ Այն ընդգրկում է Մ. Նալբանդյանի շարժուն, հարահոս գործունեության բոլոր կողմերը, բացահայտում է նրա գրական ժառանգության վսեմ նշանակությունը և, փաստորեն, նալբանդյանագիտության անցած ուղու հանրագումարն է։ «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրու-

---

5 Ալ. Մյասնիկյան, Միքայել Նալբանդյանը և հայ ինտելիգենցիան («Պայքար» հավելված «Խորհրդային Հայաստանի», 1923, № 12—13, էջ՝ 1—2)։

6 «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 35—78, 1966, № 1, էջ 34—62։

7 «Գրական թերթ», 15. IV. 1966։

8 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 20, էջ 219—220։

թյան հրապարակ գալուց հետո Մ. Նալբանդյանի մասին գրված շատ աշխատությունների վրա զգացվել է նրա ազդեցությունը։ Ցավոք, նույնիսկ նրանում տեղ գտած Մ. Նալբանդյանի որոշ ժամանակակիցներին, հատկապես ականավոր հրապարակախոս, մտածող, Մ. Նալբանդյանի հյուսիսափայլյան շրջանի նեցուկ Ս. Նազարյանին տրված վիճելի ու անհարկի բնութագրությունները առանձին հետազոտողներ չեն հաղթահարել։ Ամենայն հավանականությամբ, դրանում քիչ դեր չի խաղում Ա. Հովհաննիսյանի գիտական հեղինակությունը։ Մեծարելով Մ. Նալբանդյանին, հարկ չկա ստվեր նետել նրա ժամանակակիցների, հայ մշակույթի երախտավորների վրա, ինչպես այդ արվում է որոշ հեղինակների կողմից։ Ուբյեկտիվ հանգամանքները նշանակություն են ստանում պատմական երևույթների ու դեմքերի գնահատման երկրորդական մատույցներում։ Ծայրահեղությունները վնասակար են։ Շատ պրոբլեմներ ու բանավեճեր են ծնունդ առել, որոնք տակավին լուծում չեն ստացել։

Անուրանալի է այն հանգամանքը, որ հանձին Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության սովետական նալբանդյանագիտությունը իր հաստատուն տեղը գտավ հայագիտության անդաստանում։ Գիտնականը քաջատեղյակությամբ է լուսաբանել Մ. Նալբանդյանի գրական, հասարակական, քաղաքական աշխարհայացքը, նրա փիլիսոփայական, պատմամատերիալիստական, լեզվագիտական հայացքները, զարմանալի նուրբ դիտողականությամբ քննել է Նալբանդյան գրողի վաստակը, հրապարակախոսությունը, ճիշտ արժեքավորել նրա թե՛ հասարակական-քաղաքական, և թե՛ դեղագիտական դավանանքը։ Մ. Նալբանդյանին նվիրված ոչ մի գիրք, մենագրություն այնպես բազմակողմանիորեն չի քննարկում նրա կյանքը, ինչպես վերոհիշյալ աշխատությունը։

Համակ նվիրումով և պատշաճ օբյեկտիվությամբ գնահատելով և արժեքավորելով Մ. Նալբանդյանի գործունեությունը, Ա. Հովհաննիսյանը իր մենագրության երկրորդ գրքում գրել է. «Հնացած չէ՞ արդյոք Նալբանդյանն այսօր»։ Պատասխանելով, որ Մ. Նալբանդյանը և նրա այսօրվա ժառանգորդները հեղափոխական տարբեր միջավայրի ու տարբեր մոմենտների արտահայտիչներն են, նշում է, որ նա պատկանում է «...մեծ այն մեռելների թվին, որոնց ժառանգությունը ներհյուսվում է այժմեականությանը, որպես կենդանի ու խտսուն արժեք»[9]։

Իր կյանքի վերջին տարիներին Ա. Հովհաննիսյանը հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների առաջացմանը նվիրված ուսումնասիրություններում, որոնց մի մասը լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդեսում», «Բանբեր Հայաստանի արխիվների» և այլ պարբերականներում, նորահայտ նյութերի միջոցով փորձում էր ցույց տալ Մ. Նալբանդյանի և նրա գլխավորած հեղափոխական-դեմոկրատական հոսանքի գաղափարների հաջորդ տասնամյակների համակիրներին ու շարունակողներին, որոնք և կապող օղակ դարձան Մ. Նալբանդյանի և XX դ. արշալույսին Հայաստանում ձևավորված մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միջև։ Վ. Ի. Լենինը 1912 թ. «Երկու ուտոպիա» հոդվածում գրել է, որ անցյալ դարի 80-ական թվականների մարքսիստական գրականության մեջ «կարելի է գտնել սիստեմատիկորեն կիրառված ձգտում՝ զատելու

[9] Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 604։

այս արժեքավոր դեմոկրատական միջուկը։ Երբևիցե պատմաբանները սիստեմատիկորեն կուսումնասիրեն այս («դեպի ժողովուրդը» շարժումը—խ. Բ.) ձգտումը և հետամուտ կլինեն նրա կապին այն բանի հետ, ինչը XX դարի առաջին տասնամյակում ստացավ «բոլշևիզմ» անունը»[10]։

Նալբանդյանագիտության ասպարեզում Ա. Հովհաննիսյանի վաստակը միայն իրենով չի չափվում. այն խթանեց նաև լուսաբանելու Մ. Նալբանդյանի քաղաքական, գրականագիտական, տնտեսագիտական, լեզվագիտական, փիլիսոփայական, մանկավարժական, լուսավորական, հրապարակախոսական հայացքները։ Նա որոշակի շոշափելի դարձրեց Մ. Նալբանդյանի անձնական և քաղաքական կապերը ռուս մեծ հեղափոխական դեմոկրատների հետ, որոնց ուսումնասիրությունը ավելի խորացրեցին Ս. Դարոնյանը, Ա. Ինճիկյանը, Գ. Ստեփանյանը, Գ. Ղարիբջանյանը, ե ուրիշներ։ Արժեքավոր են Ս. Դարոնյանի ռուսերեն լեզվով Մոսկվայում և Երևանում հրատարակված «Միքայել Նալբանդյան» (Մ., 1953), «Մ. Նալբանդյանը և ռուս հեղափոխական դեմոկրատները» (Մ., 1967), «Միքայել Նալբանդյան։ Ստեղծագործության և գրական կապերի պրոբլեմներ» (Երևան, 1977) և այլ կապիտալ աշխատություններ։ Նալբանդյանագիտության կարևոր նվաճումներից մեկը, հիրավի, ռուս հեղափոխական դեմոկրատների հետ ունեցած կապերի պրոբլեմի լուծումն է։ Ստ. Շահումյանը դեռևս 1902 թ. Ղ. Աղայանի գործունեության 40-ամյակի առթիվ գրած «Հոբելյանական ճառում» անդրադարձել է այդ հարցին, առաջադրել է թեզը, բայց ժամանակն այնպիսին էր, որ նա ի վիճակի չէր ամեն ինչ ասել[11]։ Պրոբլեմը իր լուծման ճանապարհին դրվեց միայն սովետական շրջանի նալբանդյանագետների կողմից, թեև այս ուղղությամբ տակավին շատ բան կա անելու։ Վերջին տասնամյակներում բավականաչափ նյութեր և արժեքավոր եզրահանգումներ են դրվել գիտական շրջանառության մեջ, որոնք լույս են սփռում Մ. Նալբանդյանի 1857, 1858, 1859, 1860—1862 թվականներին արտասահման կատարած ուղևորությունների, Ա. Գերցենի, «Լոնդոնի պրոպագանդիստների», «Զեմլյա ի վոլյա» գաղտնի կազմակերպության և ռուս վտարանդիների հետ ունեցած քաղաքական կապերի, անձնական հանդիպումների և մերձեցմանը աղերսվող հարցերի լուսաբանման վրա։ Ժամանակի մամուլը, հայրենական և արտասահմանյան արխիվների վավերագրերը դեռևս շատ բան ունեն ասելու Մ. Նալբանդյանի այդ կապերի մասին, բացահայտելու նոր, հետաքրքիր էջեր։

Մ. Նալբանդյանի կյանքը և գործունեությունն արտացոլող աշքի ընկնող գործերից են «Հայ գրականության պատմություն», «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակներում, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում», «Սովետական մեծ հանրագիտարանում» և բազմաթիվ այլ հանրագիտարաններում և գիտատեղեկատու գրքերում նրա մասին դրված ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնք արտացոլում են հասարակական գիտությունների, հայագիտության, այդ թվում և նալբանդյանագիտության նվաճումները։

«Հայ գրականության պատմության» երկրորդ հատորում (Երևան, 1962), զետեղված Խ. Սարդսյանի «Միքայել Նալբանդյան» աշխատությունը գիտա-

---

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 455։

11 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1975, հ. 1, էջ 24—39։

հետազոտական քրտնաջան աշխատանքի ու քաջատեղյակության արգասիք է, գիտական երկի իսկական օրինակ։ «Սովետական մեծ հանրագիտարանում» տպագրված Ս. Դարոնյանի «Միքայել Նալբանդյան» հոդվածը սովետական նալբանդյանագիտության նվաճումների սեղմ ամփոփումն է։ Նրանում ճիշտ կերպով տրված է Մ. Նալբանդյանի տեղը մեր երկրի հեղափոխական շարժումների և մշակույթի պատմության մեջ, ընդգծված է, թե՝ «Ռուսաստանում հեղափոխական իրադրության տարիներին՝ 1859—1861 թվականներին, Մ. Նալբանդյանը «Կոլոկոլի», «Սովրեմեննիկի» պրոպագանդայի ազդեցությամբ հայ անդրանիկ գրողն էր, որ ամբողջովին կանգնեց հեղափոխական դեմոկրատիայի դիրքերի վրա»[12]։

Մ. Նալբանդյանն ուներ հանրագիտարանային գիտելիքներ։ Այդ է պատճառը, որ նա իր կայուն տեղն է գրավել «Փիլիսոփայական համառոտ բառարանում» (Մ., 1955, նույնը հայերեն, Երևան, 1975), «Գրական համառոտ հանրագիտարանում» (Մ., հ. 5, էջ 90), «Սովետական պատմական հանրագիտարանում» (Մ., հ. 9, էջ 882) և այլ հանրագիտարաններում։ Մ. Նալբանդյանին նվիրված հոդվածներ են լույս տեսել Սովետական Միության կենտրոնական և տեղական մամուլում, գիտական հանդեսներում, արտասահմանյան հանրագիտարաններում, սփյուռքում և այլուր։ «Բանվոր», «Լրաբեր», «Երիտասարդ Հայաստան» (ԱՄՆ), «Անահիտ» (Փարիզ), «Երևան» (Սոֆիա), «Նոր կյանք» (Բուխարեստ), «Արարատ» (Բեյրութ) և այլ պարբերականներում լույս են տեսել սովետահայ և սփյուռքահայ հեղինակների բազմաթիվ շահեկան հոդվածներ՝ նվիրված Մ. Նալբանդյանին։ Ա. Զոպանյանի խմբագրությամբ հրատարակվող «Անահիտում» 1932—1933 թթ. լույս են տեսել Ռ. Բերբերյանի «Նալբանդյանը և Գ. Այվազովսկին», «Միքայել Նալբանդյանի դիվանը» և այլ հոդվածներ։ Մ. Նալբանդյանի մասին հոդվածներ են հրատարակվել հունգարական և այլ հանրագիտարաններում։

Մ. Նալբանդյանի գրական ծածկանունների վերծանման, նրա գրական ժառանգության, հատկապես անհայտ էջերի հայտնաբերման ու հրապարակման գործում մեծ են վաստակաշատ հայագետ Ե. Շահազիզի ծառայությունները։ 1932 թ. լույս տեսավ Ե. Շահազիզի «Դիվան Միքայել Նալբանդյանի» ժողովածուն, որտեղ ի մի են հավաքված և գիտական մեկնաբանություններով հրապարակված են Մ. Նալբանդյանի 96 նամակ, որոնց մեծ մասը նա գրել է Կամիշինի աքսորավայրից։ 1938 թ. հրատարակվել է նույն հեղինակի «Մ. Նալբանդյանի նորագյուտ նամակը» հոդվածը։

1954 թ. հրատարակվեց Ա. Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» արժեքավոր աշխատությունը։ Վաստակաշատ գրականագետը Սովետական Հայաստանում առաջինն է ձեռնարկել գիտական տարեգրության ստեղծման գործը և դրանով իսկ դարձել այդ ժանրի պիոները։ Արխիվային և հրապարակված նյութերի միջոցով Ա. Ինճիկյանը օր-օրի ցույց է տվել մեծ գրողի և հեղափոխական դեմոկրատի կարճատև, բայց փոթորկալից կյանքը, գիտական շրջանառության մեջ դրել մինչև այդ անհայտ նոր, բազմաթիվ փաստեր։ Ա. Ինճիկյանը 1954 թ. հրատարակել է նաև «Միքայել Նալբանդյան։ Համառոտ ակնարկ» աշխատությունը։ Ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե ասենք, որ ոչ մի հեղինակ

---

12 «Большая Советская Энциклопедия», т. 17, էջ 225։

(Ա. Հովհաննիսյանից հետո) այնքան երկար ու խորը չի զբաղվել Մ. Նալբանդյանի գործունեության լուսաբանմամբ, ինչպես Ա. Ինճիկյանը։ Դրա առհավատչյան Ա. Ինճիկյանի ստեղծած Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունն է, վավերագրերի ժողովածուն, տասնյակ հոդվածները։

Նալբանդյանագիտության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում Մ. Նալբանդյանի գրական-գեղարվեստական, գրականագիտական ժառանգության ուսումնասիրությունները։ Ուշադրության արժանի այդ գործերի հեղինակները հայ նշանավոր գրականագետներն են (Ա. Կարինյան, Խ. Սարգսյան, Ս. Արեշյան, Ա. Տերտերյան, Գ. Ստեփանյան, Էդ. Ջրբաշյան, Ն. Մուրադյան և ուրիշներ)։ Մի քանի տասնյակի հասնող այդ գործերում, հայ նորագույն շրջանի գրականության առաջընթացին համաչափ, լուսաբանվում են Մ. Նալբանդյանի գեղարվեստական արձակ և չափածո ստեղծագործությունների գաղափարական ելակետերը, քաղաքական-հայրենասիրական պոեզիայում առաջադրած պրոբլեմները, որոնք սերտորեն առնչվում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական, հեղափոխական-դեմոկրատական պայքարի, նրա սոցիալ-քաղաքական ու տնտեսական պայմանների բարելավման, մշակույթի զարգացման, ազգային ոգու և ինքնագիտակցության բարձրացման նալբանդյանական ըմբռնումին։

Արժեքավոր աշխատություններ են նվիրվել Մ. Նալբանդյանի լեզվագիտական հայացքներին (Ա. Ղարիբյան, Ս. Ղազարյան, Ա. Մարզարյան և ուրիշներ)։

Մ. Նալբանդյանի արմատական, դեմոկրատական դիրքորոշումը գրապայքարի հարցում փաստորեն վճռական ներգործություն ունեցավ ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման մի քանի ընդհանուր ուղղությունների վրա։ «Հյուսիսափայլի» լեզուն, գրաբարի բացասմամբ հանդերձ հող էր նախապատրաստում գրական լեզվի դեմոկրատացման և ժողովրդականացման համար։

Նալբանդյանագիտության վերջին շրջանի նվաճումներից մեկն էլ այն է, որ մի շարք աշխատություններում ցույց են տրված Մ. Նալբանդյանի և նրա ղեկավարած հեղափոխական-դեմոկրատական հոսանքի առնչությունները արևմտահայության ազատագրական պայքարի, նրա դեմոկրատական մտքի ռահվիրաների՝ Ս. Ոսկանյանի, Հ. Սրվանձյանի, Մ. Մամուրյանի, Գ. Չիլինկիրյանի, Ս. Թագվորյանի և այլոց հետ։ Մ. Նալբանդյանի շնորհիվ հայ զույգ հատվածների հասարակական մտքի և մշակութային զարգացման միտումները ներթափանցվեցին միմյանց՝ պայմանավորելով ազգային զարթոնքի հետագա խորացման պրոցեսը։ Մ. Նալբանդյանի թե՛ անձնական շփումները (հատկապես արտասահման կատարած ուղևորությունների ժամանակ), և թե՛ գաղափարական ազդեցությունը դարբնեցին և առաջ մղեցին արևմտահայ դեմոկրատական միտքը։

Արևմտահայ դեմոկրատական միտքը XIX դ. 70—90-ական թվականներին շարունակել է ներշնչվել և գաղափարապես սնվել Մ. Նալբանդյանի առաջավոր հայացքներից։ Դարավերջի արևմտահայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը ցոլացնում է գաղափարական հաղորդակցության այդ երևույթը, ճիշտ այնպես, ինչպես և ժամանակի արևելահայ նարոդնիկա-

կան մտավորականությունն էր ներշնչվում մեծ հեղափոխական-դեմոկրատի տեսական զինանոցով։ Այս իրողությունը ցույց է տալիս, որ Մ. Նալբանդյանը համազգային երևույթ էր, որի գաղափարական ակունքից տասնամյակների իրենց ուղին պետք է սկսեին և՛ արևելահայ, և՛ արևմտահայ առաջավոր հասարակական ուղղությունները։

Նալբանդյանագիտության սովետական շրջանի նվաճումների նկարագրությունը թերի կլիներ, եթե շրջանցեինք տնտեսագետների, փիլիսոփաների, մանկավարժների, հոգեբանների, հրապարակախոսների ներդրումը։ Ուշագրավ մի շարք աշխատություններ են հրատարակվել Մ. Նալբանդյանի սոցիալ-քաղաքական, մանկավարժական ու լուսավորական գործունեության մասին։

Հայտնի է, որ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը Մ. Նալբանդյանի գլուխգործոցներից է։ Նրանում քննարկված են քաղաքական, սոցիոլոգիական, փիլիսոփայական, տնտեսագիտական բազմապիսի հարցեր, որոնք տեսական խորին հիմնավորվածությամբ առաջ են քաշում գործնական-քաղաքական նշանակություն ունեցող կենսական պրոբլեմներ։ «Ինչ է մեր խնդիրը» հարցադրմանը Մ. Նալբանդյանը պատասխանել է. «...Մեր խեղճ ազգի թշվառությունը»[13]։ Հետազոտողները ճիշտ են նկատել, որ «Երկրագործության» մեջ Մ. Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկում ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը այն բանի համար, որ նրա հռչակած մարդկության փափագած «ազատություն, հավասարություն, եղբայրություն» պահանջը մնաց թղթի վրա, ագրարային հարցը չլուծվեց, աշխատավոր զանգվածները առաջվա պես մնացին շահագործողների ճիրաններում, աղքատության ու թշվառության մեջ։ Արձագանքելով Ա. Գերցենի, մասնավորապես «Այն ափից» («С другого берега») ծրագրային հոդվածաշարի գաղափարներին, Մ. Նալբանդյանը դերցենյան ոճով գրում էր. «Եվրոպան ուշ ծնեցավ, բայց շատ արագ ծերանում է...։ Այո՛, Եվրոպան կանգնած է այսօր մի դժվար լուծանելի խնդրի առջև, այդ տնտեսական խընդիրն է, Մարդը և հացը։ Եվ այդ խնդիրը կանուխ, թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծվի։ Ոչինչ բռնություն, ոչինչ պահպանողական համակարգություն, ոչինչ ընդդիմադրություն, որևիցե կողմից, չէ պիտո կարողանա փակել նորա առաջը, թեև այսօր հալածակա՞ն և աքսորակա՞ն են այդ ապագայի մարգարեքը և առաքյալքը»[14]։

Մ. Նալբանդյանը, համոզված լինելով գյուղացիական հեղափոխության անխուսափելիության մեջ, հանգում է այն եզրակացության, որ «մարդու և հացի» խնդիրը «կանուխ թե ուշ, թեև սոսկալի փոթորիկներով պիտի լուծվի», քանի որ ոչ մի բռնություն չի կարող խափանել այն։ Այստեղից էլ հետևում է Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների վերածնունդն ու ազատությունն ապահովելու համար հեղափոխական ճանապարհով բռնապետությունների ոչնչացման նալբանդյանական քաղաքական ուղեգիծը։

Հետազոտողները ցույց են տվել, որ Մ. Նալբանդյանի դիրքավորումը գյուղացիական հարցում համերաշխում էր «Լոնդոնի պրոպագանդիստների» հայացքներին։ Նալբանդյանը բոլոր հեղափոխական դեմոկրատների պես

---

13 Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, հ. III, էջ 65։
14 Նույն տեղում, էջ 81։

ագրարային հարցի լուծումը համարում էր կապիտալիզմից խուսափելու, ռուս մանր արտադրողներին պրոլետարացումից աղատելու միջոց։ Նա պաշտպանում էր դյուղական համայնքի վերաբերյալ գերցենյան տեսությունը և կանգնած էր հեղափոխական ուղու՝ «կացնի» արդյունավետության տեսակետի վրա։ «Տնտեսական հեղափոխության» ելքը նա տեսնում էր ռուսական համայնքի մեջ, գրանով իսկ հավատարիմ մնալով ռուս հեղափոխական դեմոկրատների մտքի ուժեղ և թույլ կողմերին[15]։

Նալբանդյանագիտությունը հարստանում է։ 1979 թ. լույս է տեսել Ա. Կարինյանի «Միքայել Նալբանդյանը և XIX դ. 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները» գրքույկը, որը Մ. Նալբանդյանի մասին 1928—1978 թթ. հեղինակի իսկ գրած հոդվածների ընտրանին է։

Մ. Նալբանդյանի ծննդյան 150-ամյակի առնակասարությունն ու հոբելյանական հրատարակությունները նշանավորում են նալբանդյանագիտության զարգացման նոր աստիճան։ Նոր ուժով են բացահայտվում հեղափոխական մեծ դեմոկրատի ինտերնացիոնալիստական հայացքները, ընդգծվում նրա գրական հարուստ ժառանգության պատմական նշանակությունը և այժմեականությունը։

Մ. Նալբանդյանը իր դավանած քաղաքական հայացքներով, աղատագրական պայքարի գաղափարներով, հեղափոխական ավյունով, սեգ արծվի պես բացեց թևերը, հախրեց հայկական երկնակամարում, հարաղասորեն արտահայտեց ժողովրդի խոհերն ու զգացումները, հայ հասարակական զարգացմանը հաղորդեց նոր բովանդակություն։ Հենց նրանով էլ պայմանավորված է XIX դ. 60-ական թվականների հայ դեմոկրատական մտքի սոցիալ-քաղաքական շրջադարձը։ Ահա թե ինչու հայ մեծանուն վիպասան Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան) իր սրական երախայրիքը՝ «Սասնա ծռերի» վեպը, նվիրելով Մ. Նալբանդյանին, ընծայականում գրել է. «Քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հրշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունը ամեն մի հայի սրտում մինչև գարերի վերջը»[16]։

Մ. Նալբանդյանը բոցաշունչ հեղափոխական էր. հայ ժողովրդի պարծանքը, նրա ազգային և սոցիալական զարթոնքի մարգարեն։

ДОСТИЖЕНИЯ СОВЕТСКОГО НАЛБАНДЯНОВЕДЕНИЯ

ХИКАР БАРСЕГЯН

Резюме

Деятельность М. Налбандяна—великого революционного демократа, выдающегося писателя и публициста, философа и экономиста, литературного критика и теоретика, представляет собой кульминацию армянской общественно-политической мысли в домарксовый период.

15 Այս մասին տես Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 121—131։

16 Ր ա ֆ ֆ ի, Երեք, հ. 1, Երևան, էջ 52։

Налбандяноведение возникло и развилось в годы Советской власти. Это—прежде всего широкое издание (в том числе академическое) произведений М. Налбандяна на армянском, русском и др. языках. Изданы также многочисленные ценные труды, монографии, посвященные жизни и деятельности великого революционного демократа, идейного соратника великих русских революционных демократов—В. Белинского, Н. Чернышевского, Н. Добролюбова, А. Герцена и др.

Основываясь на трудах первых армянских марксистов, советские налбандяноведы внесли весомый вклад в дело издания литературного наследия М. Налбандяна и всестороннего освещения его революционной, общественно-политической и литературной деятельности. Именно в советский период М. Налбандян получил достойную оценку в качестве соратника великих русских демократов. В трудах советских ученых показано, что своими взглядами, идеями освободительной борьбы, революционным порывом М. Налбандян внес новое содержание в армянское общественное развитие, чем и был обусловлен социально-политический поворот армянской демократической мысли 60-ых годов XIX в.